

15910

Чистый фильтр
1896 р

891.81
42-17

26

1364
19 NOV 2010

ՏԱՃԻԿ ՓԱՇԱ

ԲՈԼԳԱՐ ՄԻԱՅՆԱԼԻՔՆԻ ՑԻԱՏԱԿԱՐԱՆԸ

891.81
47-17

№ 286 չ. գ. 5.

Փ բ ի ա ղ ը ե ց

N 180 m.

Գ. ՔԱՀ. ՄԿՐՏՉՈՒՄԵԱՆՑ.

ԱՐՏԱՏՊԱԺ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԻՑ.

• 92 •

ՄՈՍԿՈՒԱ

ՏՊԱՐԱՆ Ք. ԲԱՐԻՍԻԴԱՐԵԱՆԻ.

1896

ՏԱՇԻԿ ՓԱՇԱ

ԲՈԼԳԱՐ ՄԻԱՆՉԱՆԻՔՆԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

891.81

Հ7-17

մր.

N 286

Փակում

N 180

Գ. ՔԱՀ. ՄԿՐՏՉՈՒԹԵԱՑ.


ԱՐՏԱՏՊԱԺ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԻՑ.

2119

ՄՈՍԿՈՒԱ

ՏՊԱՐԱՆ Ք. ԲԱՐԻՆՈՒԴԱՐԵԱՆԻ

1896



13 .08. 2013

15910

ԱՅՍՓ. ԱՇԽԱՏ

ԵՐԱՎԱՋԱՅԻՑ ՀՈՅԱՀԱՄԱԿԻ ՊՐՈՊ

Дозволено цензурою. С.-Петербургъ, 13 мая 1896 г.



609

42.

Типогр. Х. Бархударянъ, Москва, Мясницкая, д. Ермаковыхъ.

ԱՅՍՓ. ԱՇԽԱՏ

0881

ԵՐԱՎԱՋԱՅԻՑ ՀՈՅԱՀԱՄԱԿԻ ՊՐՈՊ ԱՇԽԱՏ

ԱՆԴԱՎՈՐ ԱՆԴԱՎՈՐ ԱՆԴԱՎՈՐ ԱՆԴԱՎՈՐ ԱՆԴԱՎՈՐ

ՏԱԶԻԿ ՓԱՇԱ

ԲՈԼԳԱՐ ՄԻԱՆՉՆՈՒՀՈՒ ՑԻՇԱՑԱԿԱՐԱՆԸ.

Քոլգարիայի սարերում ճանապարհորդելիս՝ մտայ «Ընծայութիւն Աստուածածնայ» անունով կուսանաց վանքը տեսնելու այն եկեղեցին, որ իբրև թէ շինուած էր շատ հարիւր տարիներ տուած։ Ես ցանկութիւն յայտնեցի ծանօթանալ մայբառպետի հետ. Ինձ տարան նորա խուզը երբ ներս մտայ, տուած կանգնած էր մի քառասնամեայ կին, որ զեռ չէր կորցրել իւր գեղեցկութիւնը և երեսի զուարթութիւնը։ Նա խմոր էր հունցում գաթայի համար։ Նորա հագուստը շատ աղքատ էր, տկլոր մարմնի վերայ հագել էր մի անշնորհք քուրձ, իսկ բարիկ ուներին կանացի սանամաններ։ Բայց՝ չնայելով նորա աղքատ հագուստին, շատ բարի դէմք և մարզասէր նայուածք ունէր. այնպէս որ ամեն նորան տեսնողը կ'ասէր—զա թէե հագնուած է աղքատ, բայց անպատճառ թշուանների բարեկամ պիտի լինի և օգնող նոցա՝ նեղութեան մէջ։

Մենք շուտով մտերմացանք իրար հետ։

Դարակների վերայ և պահարաններում դարսած էին տեսակ տեսակ զրբեր. շատ զարմացայ, երբ իմացայ, որ զրանք իտալերէն, ռաերէն, յունարէն, սերբերէն, բոլգարերէն զրբեր էին. մի քանիսն էլ մինչև անգամ տաճկերէն ձեռագրեր էին։ Կար նոյնպէս Աստուածաշունչ և ուրիշ շատ եկեղեցական զրբեր։

—Ինչպէս երեսում է, քեզ զարմացնում է իմ զրագարանը, — հարցրեց մայբառպետ։ — Ես զրբեր շատ եմ

սիրում և շատ էլ կարգում եմ. իսկ մի բօլգարերէն դիրք կամ լըագիր տեսնելիս, հէնց զիտեմ, թէ հարազատ զաւակներս եմ տեսնում: Պէտք է ասել որ բոլոր լաւ զբքերս, մանաւանդ բօլգարերէն լեզուով զբուածները, կողպած եմ պահում մնդուկում:

—Բայց դու զիտմ՞ս, որ զբքերը կարգալու համար են և ոչ թէ կողպած պահելու:

—Այո, ես այդ զիտեմ: բայց ունեցած զբքերս ոչ թէ մի, այլ հարիւր անգամ եմ կարգացել իսկ այժմ ոչ մի զիրք չունիմ կարգալու, ուստի սկսել եմ Աստուածաշունը կարգալ տաճկերէն լեզուով:

—Բայց որտեղ ես սովորել տաճկերէն, —հարցրի ես:

—Տաճկերէն, յունարէն, խտակերէն, բօլգարերէն, սլաւոներէն սովորել եմ գեռ ջահիլ ժամանակս, իսկ սսերէն և սերբերէն սովորել եմ կուսանոցում:

—Դու ինձ զարմացնում ես, —ասացի, —ես չեմ կարողանում հասկանալ, որ դու կին լինելով և ապրելով կուսանոցի մի անկիւնում, ի՞նչպէս կարողացել ես այս շատ բան սովորել:

—Զարմանալու ոչինչ չկայ, —ասաց մայրապետը քմծիծաղ տալով, —կեանքը ամեն բան սովորեցնում է: Եմ կեանքը անտանելի էր, ոչ ոք և ոչինչ չունեի, որ սիրէի, այս պատճառով էլ ես սիրեցի զբքերը, ուսումը և միայն զբքերիս մէջ գտայ իմ ցաւերիս զեղը: Եթէ ցանկանում ես ծանօթանալ անց կացրած կեանքիս հետ, իմանալ քաշած չորչարանքներս, վեր առ այս տեսրակը ու լաւ կարգա, իսկ յետոյ ինչ ուզում ես՝ մտածիր իմ մասին, —ասաց նա:

Այժմ մեր առաջն է այդ փոքրիկ տեսրակը, որ մեզ ծանօթացնում է այն տանջանքների հետ, որ քաշել են թօլգարները Մահմուդ փաշայի տիրապետութեան օրսվ:

Ա.

Գլխովս անցածները շատ գառն են և զարհուրելի և շատ կ'ուղենի մոռանալ բայց մարդ այնքան ոյժ չունի, որ զլիով անց կացածները մօռանայ: Զյիշել անցածը —վեճակուած չէ մարդուն, այս պատճառով էլ ակամայից մտաբերելով սարսափելի անցիսալս, միշտ ինքս ինձ հարցնում եմ. ի՞նչու համար է վերջապէս մարդս աշխարհ եկել: Եթէ նա աշխարհ է եկել միայն չարչարանքներ քաշելու և արտասուբներ թափելու, աւելի լաւ էր, եթէ չձնուելու: Ի՞նչու են բօլգար մայրերը երեխաներ ծնում: Մի՞թէ նորա համար, որ բօլգարը տարիներով եղի նման աշխատի, չարչարուի, իսկ թուրքը նորա արիւն - քրայինքով զատածին տէր գառնայ և նորա հաշուով ուրախ, անհոգ կեանք անց կացնի: Մի՞թէ նորա համար են բօլգար մայրերը երեխաներ մեծացնում, որ սուրբ, կրակը, կախաղանները, կացինները վերջ տան նոցա կեանքին. Էլ որ մէկը տսեմ... թօլգարներ, փրկուելու հնարներ մտածեցէք. թափցրէք ձեր սնդուկները, ահա ագահ, կատաղի թուրքը կըգայ և Մահմեդի անունով ձեր փորը զուրս կըթափի: Մայրեր, պահպանեցէք ձեր աղջեկներին, նոյս սպասում է խայտառակութիւն և անբաղդութիւն: Թաղցրէք ձեր տղաներին, նոքա կըթրքանան և վերջը ձեր զլիին կրակ կըթափեն: Միայն տաճիկները չեն, որ այս պիսի անգթութիւններ են անում, յօներն էլ Աստուծոյ և կրօնի անունով պատրաստ են մեզ ծախել ում կամենաք հինց նորա համար, որ իրենք լաւ ապրեն: Նոքա տաճիկների հետ խօսք են կապում և այնուշետե սկսում են կոտորել բօլգարներին, փակում են բերդերում, ծովում խեղզում են և ջահիլ տղաներին ու աղջեկներին թըքացնում են և այլն... թօները քարոզում են. «Մենք բայրու

Էլ եղբայրներ ենք. միմեանց, մինչև անգամ մեր թշնամիներին էլ պէսաք է սիրենք»։ Իսկ տաճիկները ասում են. «Մեզ Աստուած և Նորա մարդարէն իրաւունք են առւել պատճել ամեն չարութիւն, պայմասութիւն և ամեն՝ ինչ որ օրէնքից դուրս է»։ Բայց թէ տաճիկները և թէ յօները անխիղջ կերպով սուտ են ասում. երկու ազգերի քարոզածներն էլ խօսքեր են միայն. Ուզեղն ասած, պատահում է ժամանակ, որ յօները իրենք էլ են խոսափանում, որ եմէ թոլգարները և Սերբերը չինէին, իրենք քաղցածութիւնից կըմեռնէին և թէ Տաճկաստանում անկարելի է տուանց ցածութիւններ անելու ապրել. որ այդ բոլորը ձշմարտութիւն է, դորա կինդանի օրինակը ես եմ:

Ես ծնուել եմ Տըսնով քաղաքում. Հայրս հարուստ մարդ էր և ուներ սեպհական տուն։ Մեր քաղաքը շենուած էր սարի լանջին, որի մօտով անցնում էր Եանտրա գետը։ Այդ քաղաքի մասին շատ աւանդութիւններ են պատմում. աշակ թէ ինչ ասաց տատս մի անգամ. — Յովհաննէս թագաւորի ժամանակ յօները յաղթեցին բօլգարներին և ուզում էին նոցա հողերին ալիրել. բօլգարների զօրքը ցրուեցաւ. թագաւորն էլ ընտանիքով փախաւ։ Ճանապարհին մի հովիտ ասաց թագաւորին. «Թագաւորը ապրած կենայ, մի՞թէ ամօթ չէ քեզ փախչել թշնամիներից և քո ժողովրդին թօղնել յօների ձեռքը. դորա համար Աստուած քեզ կըպատճի»։

— Ի՞նչ անեմ, որ չփախչեմ. — Հարցրեց թափուորը։

— Ես ցոյց կըտամ մի տեղ, ուր կարելի է փշերից այնպիսի պատ շինել, որ նորա միջից ոչ մի յօն չէ կարող դուրս անել. քեզ, եթէ միայն յօների խօրամանկութիւնից չլսաբուես։ Յցնը խորամանկ է ինչպէս սատանայ, բայց փախկոտ է, ինչպէս նապաստակ. ասաց հովիւր և թագաւորին տարաւ այն տեղը, ուր այժմ շե-

նուած է Տըսնով քաղաքը։ Այնտեղ թագաւորը զօրք ժողովեց, նորից պատերազմ սկսեց, յաղթեց յօներին և աղասեց իւր հայրենիքը։

Մեր տունը շինուած էր զետի մօտ։ Նորա միւս ափում բարձրանում էին հասմիկի ու վարդի թփեր, ուռնիներ և ուրիշ շատերը, որոնք աղատ մեծանում էին։ Շատ էի սիրում նստել գետի ափին՝ մեր պարտիզում և հիանալ Աստուածոյ գեղեցիկ աշխարհով. միշտ ուզում էի աղատ լինել, թաղուել կանաչի մջջ և շատ անգամ էլ նախանձում էի թոչուններին, որ նորա այնպէս աղատ են։

Մի անգամ, ինչպէս միշտ, նստած էի մեր պարտիզում. արեւ վազուց ծածկուել էր սարերի ետեր. միայն վերջնալրջաբ ոսկեզօծում էր բարձր ծառերի և սարերի կատարները։ Այդ ժամանակ մօտեցաւ ինձ Բօժանը և նրանեց մօտ։

Բօժանի հայր՝ չիչո (բիձա) Նետկօն հարկահան էր։ Նա մեր կողմերում հարուստ և նշանաւոր մարդ էր, նորան բոլորը սիրում էին ու պատվում։ Այդ մարդը ունէր երկու երեխայ. — Բօժանա՝ աղջկայ անունն էր, իսկ տղայինը՝ Ստամեն. նոքա երկումն էլ շատ զեղեցիկ էին։ Մենք երեքս էլ իրար սիրում էինք. միասին խաղում էինք, պարում էինք ու երգում և համարեա ամեն օր տեսնվում էինք։ Եթէ Բօժանը և Ստամենը մի օր չեն գալիս, ես էի զնում նոցա մօտ և չիչո Նետկօն երկար չիրուխը քաշելով՝ նայում էր մեզ և ուրախանում։ Այս բարեկամներիս մօր անունը Նետկովիցա էր. նա այնքան լաւ էին էր, որ մուսանալ չեմ կարող։ Նա շատ բարի էր, հրեշտակի համեստութիւն ունէր. միշտ սիրով ու քրնչշութեամբ զուրգուլում էր թէ իւր և թէ օտար մանուկներին։ Այժմ, մոռանալ չեմ կարողանում դորանց, որովհեան միայն դորանք էին ամենաթանկազին մարդիկը

իմ սրտի համար: Երբ մայրս մեռաւ, ես շատ փոքր էի. Հօրս էլ շատ քիչ էի տեսնում, որսվհետեւ նա միշտ ձանապարհողում էր, իսկ խորթ մօրս յիշելու կարիք էլ չկայ:

Ես և Բօժանը մի հասակի էինք — ութ տարեկան, իսկ Ստամէնը տաներկու տարեկան էր. Նոքա երկուան էլ ուրախ էին և ծիծոնակների նման թրթում էին: Կարծես նոքա այժմ էլ աչքիս տուաջն են, ծիծագում են, թոչկոտում ու գժութիւններ են անում: Շատ անգամ պատահում էր, որ Ստամէնը մեր պարտիզում թաք էր կենում խաղողի որթերի մէջ և հէնց որ մենք Բօժանի հետ գալիս, նստում էինք, նա գուրս էր գալիս և գաճարակում: Իսկ մենք վեր էինք թոչում և վախենում:

Այսպէս մի օր էլ նստած էինք Բօժանի հետ և դէսից դէնից խօսում էինք, չինք ուզում բաժանուել իրարուց:

— Տուն գնալու ժամանակը չէ, — հարցրեց Բօժանը. — արդէն կէս գիշեր է:

— Էլի մի քիչ էլ նստի՛ր, հայրդ եթէ տուն եկած լինի, մարդ կ'ուղարկէն քեզ կանչելու. Ես էլ տանը մենակ եմ. — տասցի ես. — և նա մնաց ինձ մօտ:

Շատ ուշ էր. քաղաքում բոլոր ճրագները հանգրել էին. ամենքը քնած էին. միայն ժամանակ - ժամանակ լսվում էր սոխակի զգաստ ծլվլոցը: Օղը խեղզում էր կ'ասես. երկինքը ծածկուել էր սե ամպերով. երբեմն լսվում էր որոտ, երբեմն էլ լուսաւորում էր կայծակը և սկսել էր կաթկաթել անձրել:

Գնանք տուն, անձեռում է, — ասաց Բօժանը:

Եւ հէնց ուզում էինք վեր կենալ տեղներիցս, լսեցինք, որ մի բան շարժուեցաւ որթերի մէջ: Մենք կարծեցինք, որ Ստամէնն է, երկու բռով գետնից աւաղ վերցրինք և պատրաստվում էինք ածել նորս վերայ, երբ յանկարծ երկու թուրք գուրս թուան կանաչի միջից, մեզ

բռնեցին, վատկեցին բերաններս և ուսներին գնելով՝ տան նաւակը, որ կապած էր զետի տիգում: Ֆետի միւս ափում մեզ հետ միացան ևս երկու թուրք և մի քանի աղջիկներ ու տղաներ. վերջններս մեզանից առաջ էին կալանաւորուտծ: Նոքա ոչխարների նման կապուած՝ ընկած էին խոտի վերայ. այդ անբաղդներից մէկը Ստամէնն էր: Թէ ի՞նչ պատահեցաւ այնուհետեւ, ոչինչ չեմ յիշում. միայն գիտեմ, որ մեզ քշում, տանում էին անտառների, սարերի, քարերի, ցեխերի միջով և ձանապարհին զիւղեր, քաղաքներ մեզ քիչ էին պատահում: Ամեն բան լուս էր մեր չողմը, տիսուր էին և մեր սրտերը. բոլոր լոց էինք լինում, բայց հանդարտ, որովհետեւ վախենում էինք ծեծից: Յիշում եմ, որ իմ և Բօժանի ուները շատ ման գալուց սկսան ուռչել կօշեկները մաշուեցան և այն տեղը հասաւ, որ մի գիւղում տեղներիցս վեր կենալ չինք կարողանում: Գիշերները մենք քնում էինք անտառներում, կամ երբեմն տաճիկ զիւղայու տանը՝ յատակի կամ խոտի վերայ: Մեզ փակում էին տօթ տանը և քնում էինք միմեանց փաթաթուած. կարծես վախենում էինք, որ մեզանից մէկն ու մէկն չփախցնեն: Միայն Աստուծուն է յայտնի թէ որքան համբերում էինք: Առաւօտեան վաղ մտնում էր տաճիկը և բղաւում « Դէհ, վեր կացէք, ձանապարհ ընկէք»:

Մենք էլ ստիպուած վեր էինք կենում: բայց մեր յոցնած ոտները չին շարժվում, կարծես, քարեր էին կախուած նոցանից, ուստի նորից ցած էինք թափվում խոտի վերայ: Այդպիսի բոպէներին « Ասում են ձեզ, վեր կացէք» գոռում էր տաճիկներից մէկը և խփում մեզ մարակով. մենք էլ վեր էինք թոչում տեղներիցս և ձանապարհ ընկնում:

Ահա գուրս եկանք զիւղեց: Մեր ձանապարհը անցնում էր խոր ցեխերի միջով որտեղ բուսած էին մեծ մեծ

ծառեր, այդ ծառերին շըջապատռում էին բազմաթիւ թը-
փեր՝ վայրենի վարդենիներ, փշեր, որոնք դժուարացնում
էին ձանապարհը, նորա պատռում էին մեր շորերը, գծը-
տում մեր ոտները, ձեռները ու երեսը, արիւնը ներկում
էր մեր մտրմինը: Բօժանը չկարողացաւ համբերել այդ
չարչարանքներին, մի անգամ նստեց ձանապարհին և սկսեց
լոց լինել. «Ուներս ցաւում է, էլ չեմ կարողանում ման
գալ», ասում էր նա:

Տաճիկներից մէկը իւր հետ միասին ձի նստեցրեց նո-
րան: Դորա անունը ԱՇմեդ էր. մի փոքր մարդկավարին խր
ընկերների մէջ դա էր. մինչեւ անգամ նորա տեսքը գեղե-
ցիկ էր: ԱՇմեդը մեզ հետ աւելի լաւ էր վարդում և,
ինչպէս թվում էր, Բօժանին սիրում էր, նորան կերա-
կուր շատ էր տալիս, նորա վերայ խնամք շատ էր տա-
նում և երբեմն էլ զիւղի միջով անցնելիս նորա համար
քաղցրեղէն էր առնում: ԱՇմեդը հագած ունէր կարմիր
չոպկն (շորի տեսակը) բուզմա շարած, սպիտակ չա-
ման (ապարօշ) զլիսին. իսկ աբրեշտմի գօտիի մէջ խրած
էին երկու սակեզօծ աարձանակներ և վիզինի երկայն եա-
տագանը (սուր): Նորա երեսը սպիտակ էր, մազերը շեկ
և աչքերը կապոյտ: Մենք՝ երեխաներս, որ պատրաստ էինք
սիրել զեղեցիկ մարդկանց, քան սյլակերպներին, սպա-
սում էինք, որ ԱՇմեդը բարի սիրա կ'ունենայ և աղնիւ
մարդ կըլինի, բայց շատ սխալուել էինք, ինչպէս վերջը
իմացանք. նա մի այնպիսի չարագործ էր, որին զեռ աշ-
խարհը չէր տեսել: Այո՛, լինում են այնպիսի մարդիկ, ո-
րոնք ունենում են սիրուն դէմք, բայց ուե, փշացած հոգի.
իսկ կան այնպիսիներն էլ որոնյ դէմքը զեղեցիկ չէ, բայց
ունեն աղնիւ հողի և բարի սիրա: ԱՇմեդը միշտ մօտե-
նում էր Բօժանին, ձեռքը շփում էր նորա թշերին և
ասում էր. «Օ՞ն բին»: Մենք սկզբում չէինք հասկա-
նում այդ խօսքերի նշանակութիւնը, բայց վերջը իմացանք,

որ թուլքը միաք ունէր Բօժանին ծախել տաս հազար
պիասարով:

Ես Բօժանից աւելի ուժեղ էի և համարձակ. բայց
ես էլ շուտով դադարեցայ և ընկայ գետին. ինձ շուտանով
ձիուց կապեցին և հրամայեցին ձիան ետևից վազել:

Բ.

Մեր վեճակը անտանելի էր: Այդ բոլորը մեզ ծանօթ
էին այն երգերից, որ երգում էին մեր ծնողները. մեր
հայրն ու մայրը շատ բաներ էին պատմել այն չարչա-
րանքների մասին, որ տալիս էին տաճիկները, բայց որքան
էլ խօսքով լաւած լինէինք, գործով չէինք տեսել այն կըս-
կիծները, որ մենք քաշում էինք ~~թիշում~~ էի այդ բոպէ-
ներին, ինչպէս մեր ծերերն արտասուքն աչքներին և ամի
քաշելով ասում էին. «Բօլգարի ձեռքում ոչ մի իրա-
ւունք չկայ այսօր. նորա կինը, երեխաները, նա՝ ինքը,
նորա աշխատանքը, կեանքը, մի խօսքով՝ ինչ որ թանգ է
մարդու համար, բոլորը պատկանում է տաճիկներ»: Այո՛,
ուղիղ է. Բօլգարիան—իմ պաշտելի հայրենիքը ազատ չէ
այդ վայրենիների գաղանութիւններից. մինչեւ այժմ էլ
տեսնում եմ շորս կողման ամեն տեսակ գաղանութիւնն և
վայրենութիւն. այժմ էլ Բօլգարից կարելի է խլել ոչ
միայն նորա արիւն քրանքով աշխատածը, այլ և նորա
սիրած կնոջը և երեխաներին. . .

Վերջապէս հասանք Աղրիանապօլ մնացինք այնտեղ
մի օր և նորից շարունակեցինք մեր ծանապարհը:

—Տէ՛ր Աստուած, հանգստանալու էլ չեն թողնում:
—ասում էինք և արտասուք թափում:

—Մի փոքր էլ համբերէք, —սիրա էր տալիս ԱՇմեդը,
—շուտով կըհասնենք թարգրադ և այնտեղ կըհանգստանանք:

— Այնտեղ ի՞նչ կ'անմեք. — Հարցրինք մենք;
— Չգիտեմ, — պատասխանեց Ահմէզը:
— Երեխ մեզ այնտեղ կը ծախճն, — ասաց Ստամէնը
տրտառուելով:

— Իոկ ի՞նչ անելիս կը լինեն այժմ հայրս ու մայրս,
— Հարցրեց Բօժանը եղբօրից:

— Նոքա երեխ մեր մասին այժմ սուզ են անում, —
ասաց Ստամէնը և ինքն կը չկարողացաւ արտաստքը
պահել:

Տասանք Ղըրդ-Քիլիսէ, որին բօլգարները տառւմ են
Լողին-Գրադ: Ղըրդ-Քիլիսէ տաճկերէն նշանակում է քա-
ռասուն եկեղեցի. մի ժամանակ այստեղ եղել է քառա-
սուն եկեղեցի, հինգ դորանց անունով էլ կոչուել է քա-
ղաքը: Այժմ քառասունից հինգն է մնացել իսկ միւսները
օրէցօր քանզիւմ են և ծածկվում խոտով, կամ տա-
ճիկներն են քանզում ու քարերից իրենց համար գոմեր,
աներ շինում: Այդ քաղաքի հրապարակում հաւաքուած
էին շատ բօլգարուհիներ. նոքա երգում էին, պարում ու
խաղում: ուրախ էր և ամբողջ քաղաքը: Այս ինչ սեա-
չեայ էին այդ բօլգարուհիները և որքան ուրախ էին ու
զարդարուած նոցա շըջապատող երիտասարդները. դոքա
բոլոր՝ թէ աղջեկ, թէ երիտասարդ, ծլվում էին ինչպէս
անմեղ թռչուններ, զուարձանում էին միմեանց տեսնե-
լով, աչք ու ունքով ամենը իւր սրտի փափագն էր առ-
նում... Բայց հինց մեր քարվանը տեսան թէ չէ, կար-
ծես երկիրը պատառուեց և այդ ուրախ խումբը մէջը
թափուեց, որովհետեւ յանկարծ հրապարակը դատարկուեց,
ոչ ոք չմնաց այնտեղ:

Որքան ցանկանում եմ, բայց չեմ կարողանում մո-
ռանալ այդ քաղաքը, որովհետեւ այնտեղ չարչարեցին իմ
թանկագին բարեկամներից մէկին. ահա! թէ ինչ պատա-
հեց: Մեզ տարան մի հին, կեղտոտ քարվանսարա, որտեղ

մենք ձիերի հետ միասին՝ քնեցինք աղքի վերայ: Ճանա-
պարհի չարչարանքները այնքան թուլացրել էին մեզ, որ
մոռացանք իրինսահայը և իսկոյն քնեցինք: Կէս գիշեր էր,
երբ մէկ էլ զարթնեցայ և ի՞նչ տեսնեմ— Ստամէնը ճրա-
գը ձեռին չոքած էր Բօժանի մօտ և հանդարտ լաց էր
լինում: մի փոքր յետոյ նա պինդ համբուրեց քրոջը,
հանգյրեց ճրագը: Նա մօտեցաւ և ինձ. նորա շըթունք-
ները հանդարտ մօտեցան իմ թշերին և ամենայն ինչ
լուց, ամենքը քնած էին մեր չորս կողմը. միայն այդ սրբ-
բազան լուութիւնը խանդարում էր քնածների խռմիոցը:
Ես էլ քնեցի, բայց շատ քիչ յանկարծ ձայներ լուուցան,
բզաւոց, գոռոց և մենք վեր թռանք տեղներիցու:

— Անհաւատ շունը փախել է, — զուուում էր մեր պա-
հապան տաճիկ ասիացին:

— Այն դժոխքի ծնունդը, մարդարէից անիծուածը
փախել կորել է, — բարկութիւնից ասամները կրծտելով
բզաւում էր չոփուռ տաճիկը, որ ինձ և Բօժանին յա-
փրշտակել էր Տընովում:

Ամենից շատ զայրացած էր գեղեցիկ Ահմէզը: Նա
շեկեկում էր. խօսք չէր գտնում իւր սրտի չորս թիւնը
թափելու. նա անչափ բարկացած էր:

Նոքա բոլորն էլ ընկան փախչողի ետեից: Ստամէ-
նից յետ ես և Բօժանը մնացինք, կարծես, առանց պաշա-
պանի. մենք այնուհետեւ աղօթում էինք Ստամէնին, որ
Նա օգնէ խեղճ Ստամէնին աղատուել անիրաւ տաճիկների
ձեռքից և եթէ մէկն ու մէկը նոցանից ներս էր մտնում
ախոռատուն, ուր մենք զիշերել էինք, կարծում էինք
թէ կապտծ, թագ ու ջարդ արած բերում են Ստամէնին,
բայց Ստամէնից ողորմութեամբ հինգ օր էր անցել և չեին
գտնում նորան:

Հինգ օրից յետոյ երկեցաւ Ահմէզը. բայց վայ մեզ,
նա բերեց իւր հետ Ստամէնին ձեռք ու ոտքը կապտծ,

նորա հետ էլ մի երեխայ ու երկու հասակ առած աղջիկ: Նոքա համարձակուել էին Նըրդ-Քիլիսէում թագյնել Ստամբուլին իրենց տանը և դուրանով իրենց կորցրին յաւիտեան:

Մտնելով ախոռատուն, տաճիկները Ստամբուլի ոտները մի մեծ գերանից կապեցին. նոյանից մէկը նատեց Ստամբուլի իրծքի վերայ, իսկ միւս երկուսը վեր բարձրացրին գերանը, այնպէս որ նորա բորիկ ոտները վեր ցցուեցան. դորանից յետ երկուսն էլ անողորմաբար սկսեցին խփել նորա գարշապարներին: Ամեն մի խփելիս, ոտների միար կտոր ցած էր թափվում, կարմիր արիւնը շլմի էր տալիս և ներկում էր անբաղդ նահատակին: Թշուառ թօժանը չկարողացաւ զիմանալ այդ վայրենի տեսարանին և ընկաւ ուշաթափ. . . Ես մինչեւ այսօր զարհուրում եմ, յիշելով այդ ծանր օրը՝ ոտներս զողում են, մարմինս թուլանում, զլուխս այրվում, աչքերս մթնում է. . .

Նըրդ-Քիլիսէում մենք մնացինք էլի հինգ օր, մինչեւ որ Ստամբուլ և Բօժանը մի փոքր առողջացան և նորից ձանապարհ ընկանք: Ճանապարհին պատահում էին հովիներ, որոնք ուրախ երգում էին, դաշտերը կանաչով էին ծածկուած, ցորենը ոսկու նման զեղնել էր, թռչուններն էլ ուրախ, անհող ասում էին իրենց տաղերը. իսկ մենք անգյն, նիշար, կարտուած կօշիկներով, մաշուած հագուստներով, լաց ու կոծով առաջ էինք գնում. . . Բայց պէտք է ասել, մեզ այնքան նեղութիւն չին տալիս, որովհետեւ մենք փոքր էինք, իսկ հասակաւորների հետ ատաճիկները վարվում էին ինչպէս անտառունների հետ: Ի զուր էր տղամարդիկների լացը, կանանց հեկեկանքը և վախեցած երեխաների աղաղակը. այդ ամենը լսող չկար, չարագործները կտուարում էին իրենց անարդ ցանկութիւնները. . . և յետոյ՝ նորից սառնասրատութեամբ քշում էին թշուառ զոհերին առաջ, մորակներով դարկում, ծիծա-

զում էին նոյա վերայ և նոյա մասին կատակներ էին անում. . .

Մեր ամենիս միակ ցանկութիւնն էր՝ շուտով Ցարգրագ հասնել այս պատճառով էլ ամեն մի գիւղ պատահէլիս, հարցնում էինք մեր ընկերակիցներից մէկին, որի անունը Գիօրգի էր և լաւ տեղեակ ձանապարհներին. «Արգեօք շուտ կըհասնենք Ցարգրագ, արգեօք այդ երեսողը Ցարգրագ չ»:

—Ոչ, Ցարգրագը շատ հեռու է, —պատասխանում էր Գիօրգին: Մի անգամ էլ ասաց, որ Ցարգրագին մօտենում ենք:

—Հասանք վերջապէս, —գոչեցին մի առաւօտ մի քանիսը:

—Աստուած իմ, ահա Ցարգրագը երեսում է, —ասում էին միւսները:

Պ.

Ահա, մի քանի օր է ապրում ենք Ցարգրագի քարգանսարաններից մէկում, որ սարուկների վաճառանոցին մօտ էր: Գալիս էր ժողովուրդը մեզ գնելու և շատ բաւկան էր մնում, որովհետեւ ծախու ապրանքները բոլորն էլ ընտիր էին: Մեր ընկերներից մի քանիսին արգէն ծախեցին. մենք էլ մեր բազզին էինք սպասում: Բոլորս՝ թէ տղջիկ, թէ տղայ, նստած էինք բոլորովին մերկ, միայն մեզ վերայ ձգել էին աբրեշումէ սպիտակ ծածկոցներ և հրամայել էին նստել պարսկական խալիչաների վերայ հետեւալ կերպով՝ տղամարդիկ ծալապատիկ, իսկ կանայք մի ոտք ձգած և միւսը մի փոքր բարձրացրած, որ գնուղը կարողանար ձեռով շօշափել: Առաւօտները մեզ տանում էին բաղնիս. լուանում էին, սանրում, սպիտակ

և կարմիր երեկու համար զեղեր էին քսում երեսներիս, տեսակ-տեսակ հոտաւէտ իւղերով օծում էին մեղ և ծածկոցներում փաթաթերով տանում էին մեր բնակարանը ու շարքով նստեցնում: Եթէ մի գնող էր գալիս, մեր վրայից վերցնում էին ծածկոցները և այն ժամանակ մնում էինք բոլորովին մերկ: Գնողը՝ ծխելով իւր չիբուխը, նստում էր և կանչում մեզանից մէկին կամ միւսին. եթէ աղջիկ էր լինում նորան մօտեցողը, նորա կուրծքը և ապրի հաստութիւնն էր զննում, իսկ տղամարդոց ոաները և ձեռները քննում:

Մի առաւօտ մեղ մօտեցաւ մի սպիտակասօրուս ծերունի, կանաչ, ապրեշումի, չալմէն զլին. նա հագել էր կարմիր վարափիկ և կանաչագյն թանկաղին մուշտակ: Նորա հետ էր և Զօեան, որ մանրունք ծախող և բամբասանք անող յցն էին էր: Զօեան միշա զալիս էր մեղ մօտ, նստում էր և մեղ զննում: Նորա շորերը բոլորովին պատուած էին: Զարմանալի բան է, այգպիսի պատառուած շորերով աղքատներ շատ էի տեսել, նորա միշտ իմ գութը շարժել էին, սիրտս ցաւում էր նոցա տեսնելիս, իսկ Զօեայի պատուած շորերը, ընդհակառակն, զգուանքս էին շարժում: Աւելի ևս զգուելի էին նորա վասուող, չարութեամբ լիքը սե աչքերը ու գեղին, չօփուռ երեսը. իսկ նորա սուր ու երկայն քիթը, բարտկ շըմունքները ցցյ էին աալիս, որ նա մի փշացած, անբարոյական կին էր:

Տաճիկ ծերունին զննեց բոլորիս և առանց մի խօսք ասելու դուրս գնաց: Նորանից յետ՝ մի կամ երկու ժամ անցած, մտաւ մեր տէրերից մէկը և յայտնեց, որ ես և Ստամէնը պէտք է Զօեայի հետ զնանք տաճիկ ծերուկի տունը, մենք այժմ նորան ենք պատկանում, նա է մեր տէրը:

— Իսկ քոյրս, — հարցրեց Ստամէնը, — մի՞թէ նա էլ չի գտէ մեղ հետ. նա առանց մեղ ի՞նչ կ'անի:

— Նա ծախտուած է, — ասաց չոփուռ թուրքը:

— Ես ուզում եմ նորան մի հարուստ փաշայի ընդայել, — ասաց ժպտերով Ա. Հմէզը:

Բօժանը լսելով այդ, ընկաւ եղբօր գիրկը. նոքա չէին կամենում միմեանցից բաժանուել. կարծեա զիտէին, որ էլ չեն տեսնուել, էլ չեն փաթաթուել միմեանց. նոքա երկումն էլ լաց էին լինում: Քարը կըարաքէր, տեսնելով այդ անբաղներին, բայց տաճիկները և մոցիքուլ կինը հանգիստ նայում էին ինչպէս մի սովորական բանի վերայ. ոչ թէ մարդու, այլ և գալանի սիրտ էլ չկար այդ մարդոց մէջ: Այժմ հարցնում եմ. մեղաւո՞ր են այդ մարդիկը, որ գազանից էլ ցած, վատ են մեր աչքում: Ոչ գոքա մեղաւոր չեն, այլ մեղաւորները, զլսաւորապէս, զոցա մեծ մարդարէ Մահմեդն է ու հոտած մոլլանները. զոցա այդպէս վայրենի գարձնողը իրենց կրօնը, կրթութիւնն է. այդ անտանելիս օրէնքն ու սովորութիւնները նոքա ժառանգել են իրենց անխիղճ հայրերից. զոքա այն կրօնի գերիներն են, որ քարոզում է. «Ով կը յաղթի կամ կը սպանի գեավուրին, նա Մահմէդից կը վարձատարուի:

Մի փոքր յետոյ Ստամէնը ընկաւ տաճիկների ոտքը և հեկեկալով աղաջում էր. «Ա. Հմէդ աղա, Ալի՛ աղա, ողօրմէ՛ք, ինայէ՛ք մեղ մի՛ բաժանէք քրոջս, զեռ նա շատ մատաղ է: Մեղ ծնողներից բաժանեցիք, բայց այժմ գըթացէ՛ք, քրոջը եղբօրից մի՛ բաժանէք»: բայց այդ աղաշանքները զուր անցան: Զուր էր Ստամէնը արտասուք թափում, խնդրում: Նորան լսող չկար: Զուր էր Բօժանը եղբօրը փաթաթուելով զուռում: «Չեմ թողնի եղբօրս, չեմ տայ նորան տաճիկներին»:

— Ի՞նչ էք կանգնել տեղներիցդ չէք շարժվում: — ասաց Զօեան, — նոքա են ձեր բարեկամները, ում մօտ որ լաւ էք ապրում: տանջանքով աշխատած հացը ծնողների հետ ուտելիս էլ դառն է լինում: Նուտ արէք, զընանք, թէ չէ մարակով կըքշն ձեզ Այս ասելով՝ Զօեան

բոնեց Ստամբուլի ձեռքից և քաշեց նորան, ինչպէս արծիւր իւր թշուառ որսին. . .

Սեր նոր տէրը ինձ տեղաւորեց հարեմում; իսկ Սաա-
մէնին սելամլիկում: Նոր բնակարանումն մի նշանա-
ւոր բան սովորեցի, այն է Ածել. ես անիծում էի բոլորը
աշխարհիս երեսին, անիծում էի մօրս, որ ինձ ծնել էր,
հօրս, որ ինձ կեանք էր տուել անիծում էի և նոցա,
որոնք անբազութեանս պատճառ էին զառել... Բայց
ի՞նչ կարող էր անել իմ անէծքը. անզօր խօսքեր էին
միայն, որ ոչ մի կերպ չէին կարող չարագործներին վը-
նասել և չեմ էլ հաւատում այն մաշուած ձշմարտու-
թեանը, թէ փադ, ուշ յանցանքը բացվում է և մեղա-
ւորը իւր պատիժը քաշում, ասանջում է իւր հին մեղ-
քերի համար: Ոչ ես աւելի հաւատում եմ, որ Տաճկաս-
տանում իսկական յանցաւորները պատ են մնում պատ-
ժից, փառք ու պատիւ են վայելում և համարձակվում
են խաղաղ ժողովքին տանջել կոտորել և եթէ պատա-
հում է, որ նոքա իրենց պատիժը ստանում են, այն էլ
նեղացածների, չարչարտածների ձեռքից: Եյժմ ես ի՞նչ
եմ, եթէ ոչ մի զուր նահատակ (այդպէս էի մտածում
հարեմում). այս պատճառով էլ սիրա եմ անում ձեռ-
ներս թաթախել չարագործի արիւնում... Թէպէտ ես կին
եմ, բայց կինն էլ պէտք է իմանայ իւր պատիւը, իրա-
ւունքը պահպանել... կինն էլ այնքան ոյժ ունի, որ կա-
րող է իւր չարչարողին պատժել... Շատ կարելի է, որ այդ
արարմունքով կը հաստատեմ ժողովրդի աւանդութիւնը,
որ ասում է—վայրենի կենդանիների մէջ ամենից կատա-
ղին էն է.—բայց դորանով միայն ուզում եմ վրէժս
տանել չարագործներից: Թողի ինձ անուանեն արիւնարքու,
վայրենի... ինչ ուզում են ասեն, բայց ես կ'առնեմ վը-
րէժս... Ուրիշ ի՞նչ անենք...

۹۰

Հարեմում կեանքը բաւական լաւ էր. մանաւանդ
փողի կողմից: Խնչ ուզում էինք, տալիս էին, որքան էլ
թանկագին լինէր: Տէսց որ առաւօտեան զարթնում էինք,
մտնում էին մեր սենեակ սև ներքինին և արաբացի ա-
ղախինները. նոքա բերում էին մեզ համար քաղցրեղէն,
զայֆէ, պաքսիմատ: Սոցանից յետոյ խմում էինք շաբ-
բաթ, յետոյ տեսակ-տեսակ մրգեր էինք ուտում և ա-
մենից վերջը ձաշ էին բերում: Ճաշեց յետոյ լծում էին
կառքերը և կանայք գնում էին քաղաք հարկաւոր բա-
ներ գնելու, ուղեղին ասած, աւելի գնում էին գործակա-
տարների հետ տեսնուելու, այս պատճառով էլ Ստամ-
բոլի վաճառականները միշտ սիրուն ու ջահիլ գործակա-
տարներ էին պահում. այդ անում էին աւելի հայ և յոյն
վաճառականները, որովհետեւ առ հասարակ ամենից ան-
բարոյական և խաբերանները գոքա էին վաճառականների
մէջ: Շատ անգամ էլ բոլորս գնում էինք բաղնիս. այն-
տեղ ուտում, խմում, պարում, երդում էինք և առանց
պաճառի անվերջ ծիծաղում:

Մէկ էլ տեսար փաշայից հրաման էր գալիս, որ բոլոր կանայք դուրս գան այդի զբօննելու: Այդիում ամեն բարիք կար, ի՞նչ սիրտդ ուղղում է—զեղձ, ծիրան, խնձոր, տանձ, խաղող և փորթոկալ: Շատրուանները կարկաչում էին, վարզերը անուշ բուրում, թռչունները երգում էին և բազմատեսակ կենդանիները վազվային:

Բարձր ընկուղենիների հոգում ներքինին փոռում էր
խալիչաներ ու տեղաշոյեր և շարում էր բարձեր. իսկ կա-
նայք նստում, չարութիւններ էին անում, կամ պարում
էին և ով օր տարիքով մեծ էր, չիրուխ էր ծխում և
կամ նստած բամբասանք էր անում:



Ինձ հետ ապրող կանայք բոլորն էլ համարեա ողորմելի, վչացած արարածներ էին. նոքա այնքան անարդ, վատ էին, որ իրենք իրենց չին ճանաչում և շատ դժուար էր նոցա մէջ գտնել մարդու վայել վարմունք: Ես նոցա բոլորին էլ ատում էի և շատ քիչ էի տեսնվում նոցա հետ. միակ միսիթարութիւնս այն էր, որ սենեակիցս չի դուրս գալիս և միշտ զբքեր էի կարդում:

Պէտք է ասել որ ես առաջ էլ սլաւօներէն և բոլգարերէն շատ լաւ էի կարդում. բայց այն ժամանակ բոլգարերէն զբքեր չկային. իսկ երբ մտայ հարեմ, ինձ սովորեցրին արաբերէն (աղօթել Ալլահին և Մահմէդին) և յունարէն. վերջինը իմ ազատ ցանկութեամբ սովորեցի. ուսուցիչներս էին սե ներքինին և մի յոյն գերի, որին նոյնպէս ներքինացրել էին: Յունարէնից յետոյ սկսեցի իտալերէն: Յոյնը ծանօթ էր և այդ լեզուին:

Սյդպէս օրերը անցնում էին, բայց տիրութիւնս՝ քանի գնում, շատանում էր: Իտալերէն և յունարէն զբքեր կարդալով աւելի և աւելի էի սկսում հասկանալ ամօթալի լրութիւնս: Գիշերները՝ հենց որ աչքերս ծածկում էի, մի ինչ որ ծանր բան ընկնում էր կրծքիս վերայ. շնչառութիւնս զժուարանում էր և մի սարսափելի երկիւղ էր ընկնում սիրտս... Ինձ թւում էր, որ մի բան ոռնում է և խրխում, լայ է լինում և ան քաշում... Յանկարծ աչքիս երեւում էր թօժանը արիւնաթաթախ, արցունքն աչքերին... Յետոյ այդ բոլորը ոչնչանում էր և նոր պատկերներ էին երեւում աչքիս: Ես տեսնում էի հօրս, խորթ մօրս. աշա և Ստամէնը, նորա ոտներին սաստիկ խրփում են. խփում են և միլիօնաւոր մարդկանց. արիւնը վազում է... մսի կտորները թափփում... այդ բոլոքներին վեր էի թռչում քնիցս, կուրծքս սաստիկ ցաւում էր:

Բնթրիքի ժամանակ միշտ գալիս էր ծերուկ փաշան. ուտում, խմում էր և ստիպում մեղ իւր առաջ երգել.

պարել ու դայիրա ածել: Մենք երկար ժամանակ պարում էինք, իսկ նա նստած խոզի նման խմում էր Մահմէդի արգելած խմիչքը, մինչև որ հարբում էր, քնում և ներքինիները տանում էին նորան իւր ննջարանը. իսկ կանայք նորանից յետոյ էլ շարունակում էին քէֆը: Հասակ առածները այնքան խմում էին, որ նոքա էլ փաշայի նման հարբում էին: Ես չգիտեմ, հարբած կնոջից զղուելի բան կայ աշխարհիս երեսին թէ ոչ իսկ այս հուրիները ևս առաւել զղուելի էին... նոքա համբուրփում, փաթաթվում, փայփայում էին իրար, բայց մէկ էլ տեսար կռուեցին և այն տեղն էր համնում, որ քիչ էր մնում միմանց սպանէին:

Մի անգամ փաշան գործով Բէյրութ գնաց և կանայք մնացին մենակ:

— Աղատութիւն,—գոռում էին բոլորը, —ազատութիւն:

Թէև փաշան պատուիրել էր ներքինիներին, որ մեղլու նայեն և կարգ պահպանեն, բայց կանայք զիտէին ներքինիներին ձեռքներում խաղացնել—մի քանիսին կաշառում էին, միւսներին էլ ափիոնով հարեցնում էին ու այնուհետեւ ինչ ուղում անում էին: Շատ անգամ էլ պատահում էր, որ չուանների օգնութեամբ անծանօթ մարդիկ էին բարձրանում հարեմ, կամ կանայք կառքերում նստած փրանցուղների հետ էին քէֆ քաշում:

Ահա այդ մարդկանց, այդ կեղտերի, այդ ցեխի մէջ ապրեցի ինը երկար տարիներ: Մինչև այսօր էլ ականջներս խշխում են այդ գժուխքի որդիների աղաղակներից ու ծիծաղից:

Ե.

Ստամէնին տաճկացրին—Խէյրողին էին կանչում և կրթում էին նորան տաճկօրէն։ Փաշան նորան իւր որդու պէս սիրում էր. և ի՞նչպէս չսիրէր, քանի որ նա խելօք, մտածող և գեղեցիկ էր։

Մի առաւօտ կանչեցին ինձ փաշայի մօտ։ Փաշան ծալապատիկ նստած չիրուխ էր ծխում։ Ստամէնն էլ նորա աջ կողմը՝ զալեան էր քաշում։ Նա հազնուած էր թուրքի ձեռվ—կարմիր, լայն վարտիկ՝ բուզմա դրած, թանկազին ապրեշումի գօտին կապած, նորա մէջ երկու ատրճանակ և մի ե աթաղան (սուր) խրած, սպիտակ չալմէն գլխին։ ամբողջ նորա հագուստը ոսկեկար էր։ Կարծես սիրտս մի վատ բան էր նախազգում։ Եւ երբ դողողալով սպասում էի փաշայի հրամանին, նա իւր ծոյլ աչքերը բարձրացրեց և ասաց։ «Դու այսուհետեւ Ստամէնի կինը կրլինես, դու պէտք է պսակուես նորա հետ»։ Երբ այդ հրամանը լսեցի, աչքերս սեացան, ոտներս թուլացան։ Եթէ Ստամէնը քրիստոնեայ լինէր, մի օր, մի ժամ էլ որ նորա կինը լինէի, ինձ աշխարհում ամենաբաղդաւորը կըհամարէի, բայց նորա հարծը (անհարազատ կին) լինել որին այնքան սիրում էի, այդ անտանելի էր։ Ստամէնը բացի ինձանից՝ երկու, երեք կին ունէր։

Երկրորդ օրը կատարեցին մեր պսակը։ Մոլլան մի աղօթք կարդաց և բռնելով ձեռքս, տուեց Ստամէնին (ևս միշտ նորան Ստամէն էի կանչում, չէի սիրում Խէյրողին՝ տաճկական անիծած անտւնը)։ յետոյ սկսեցին քէֆ անել և զորանով էլ վերջացաւ մեր պսակը։ Ինձ համար ոչինչ ուրախ բան չկատարուեցաւ այդ հանդիսում—ոչ ընկերուհիներիս ուրախ երգելը լսեցի, ոչ մեր սիրելի բոլգարական պարերը տեսայ և ոչ էլ հօրս օրհնութիւնը

ստացայ. մինչև անդամ զրկուեցի Քրիստոսի խաչը հարբուրելուց. . .

Մեր պսակը կատարուեցաւ Զատկին։ Քրիստոնեաները եկեղեցի էին գնում, պարում, երգում էին, ամենքը ուրախ էին, իսկ ես մանում էի սենեակս և նստած այնտեղ երկար լաց էի լինում։ Մի անգամ մտաւ Ստամէնը, լուռ մօտեցաւ ինձ, բռնեց ձեռս և ասաց. «Նայդօ, ինչու ես լալիս»։ Ես փաշայի տուն մտնելուց յետոյ առաջին անգամն էի լսում իմ մայրենի լեզուն, իմ բոլգարական անունը առաջին անգամ էի լսում Ստամէնից։

—Միրտս ցաւում է,—ասայի ես.—տիրութիւնից սիրտս կտրատվում է... դու էլ գոնէ մի՛ աւելցուր տանձանքներս... անիծում եմ քեզ մօրդ բերանով, քո անբաղդ քրոջ բերանով... . .

—Ի՞նչ է պատահել քեզ նայդօ,—ասաց Ստամէնը զարմացած,—ես քեզ ձանաչել չեմ կարողանում, չեմ հասկանում քեզ մի՞թէ մեր պսակը բարկացրեց քեզ ձշմարիտն ասաւ և իմացած եղի՛ր, որ բոլոր ցանկութիւններդ կրկատարեմ։ Եթէ այժմ աշխարհում մի սիրելի բան ունեմ, այդ դու ես. մի՞թէ կալորդ եմ սիրտդ ցաւեցնել։ Նա խօսում էր բոլգարերէն, որ արդէն կիսով չափ մոռացել էր։

—Թէ ուզում ես իմանալ, ինձ համար անպատճութիւն եմ համարում պսակուել տաճկի հետ։ իմացի՛ր, որ ես ծնուել և ապրել եմ միշտ ազատ և ազատութիւնը ինձ համար թանգ է աշխարհիս երեսին։ մաքովդ մի՛ անց կացնիր, որ քո ստրուկը, հարծը կրլինեմ... Ո՛չ դու զեռ ինձ չես ծանաչում։ կարծում ես, որ կին եմ, մի թօյլ արարած, բայց իմացի՛ր, այնքան քաջութիւն ունիմ, որ պատրաստ եմ անիծել կոտորել բոլոր տաճիկներին... Անիծել մինչև անգամ քեզ որովհետեւ դու տաճիկ դարձար, հաւատգ ուրացար, ոուրբ հայրենիքդ մոռացար. . .

Հայրենիքը անիծում է քեզ դու արժանացար նորա թուք
ու մուրին... Ես այժմ էլ ազատ Բօլգարիայի զաւակն
եմ, իսկ դու հոտած տաձկի սարուկը... .

Ստամբուլ ոչ մեռած էր, ոչ կենդան, նա աչքերը
բարձրացրեց և ցած ձայնով ասաց.

— Աղաջում եմ քեզ նայդո, մի բարկանար վերաս,
ասա, ի՞նչ է սիրտ ուղում, պատրաստ եմ, կարողացա-
ծիս չափ, քեզ համար անել բոլորը:

— Ես ամեն բանով լի ու առատ եմ, բայց վատն
այն է, որ ազատ չեմ, ազատութիւնս խլուած է, որ ամեն
մարդու համար էլ թանգ է: Միայն ազատ կեանքը կարող
է թեթևացնել սրտիս ցաւերը. իսկ այդպէս ստրուկ, հարձ
լինելը ինձ գերեզման կրտանի: Դու մարդ չես ճանաչում,
դու չգիտես, որ իւր պարտը ճանաչող մարդը աւելի
լաւ է համարում քաղցած մեռնել կամ իւր կամքով
ցրտումը սառչել քան թէ ազատութիւնից զուրկ Սուլ-
թանի կինը լինել:

— Զեմ ցանկանում քեզ հարձ շինել դու օրինա-
ւոր կինս կրլինես, եթէ միայն կամենում ես, — ասաց
Ստամբուլ:

— Ես չեմ կամենում ստրուկներ կամ չարագործ-
ներ ծնել իմացի՛ր, որ մեր տղաները դահիճներ կրդառ-
նան, իսկ աղջիկները ստրկուհիներ, հարձեր կրլինեն: Ես
չեմ կամենում, որ վերջը մեր երեխաները մեզ անիծեն,
որ նոյց ստրուկ ենք ծնել: Հասկացի՛ր այդ բոլորը, Ստա-
մբու, և մտածի՛ր, որ դու էլ մի ժամանակ բօլգար էիր,
քրիստոնեայ էիր... Թօ՛ղ այդ ոսկեզօծ պալատները, ատի՛ր
այդ սև օձերին, ցած անասուններին և փախչենք Բօլգա-
րիա, Ռուսաստան, ուր ուղում ես, մինչև անգամ աշ-
խարհիս ծայրը և միայն այն ժամանակ կրսիրեմ քեզ
սուրբ սիրով այնտեղ կրպաշտպանեմ, կրփայփայեմ քեզ...
զուրիս կրտամ քեզ համար... .

— Նայդօ, ինչ ուղում ես խնդրիր, բայց մի' ասա, ես
չեմ փախչել, — ասաց սառնութեամբ Ստամբուլ:

— Տեսնում ես, Ստամբու, — ասացի ես, — բոլորը եկեղեցի
են գնում, իսկ մենք տանը փակուած, նստած ենք. «Քրիս-
տոս յարեաւ» ասող չկայ... Իսկ ուր են մեր անբաղդ
ծնողները... երեխ նոքա մոռացել են մեզ... շատ կարելի
է, որ մեռած էլ լինեն, պառկած լինեն սառ հողի տակ...
ով սուգ կ'անի նոյցա վերայ, ով կըզարդարի ծաղիկնե-
րով և օհնել կրտայ նոյցա գերեզմանները, ով յիշելիք
կրտայ եկեղեցում նոյցա հոգու համար... . նոքա մոռա-
ցուած կրլինեն ամենքից, նոյցա գերեզմանը կորած կրլինի
մեզ համար:

— Ի՞նչ անենք, երեխ մեր բաղդն էլ այդպէս էր, —
ասաց Ստամբուլ:

— Միայն յիմարները և անպիտաններն են, որ բո-
լոր անաջողութիւնները բաղդ են համարում և միայն
բաղդատորութիւնից կշացած մարդիկն են ասում, որ
մենք ենք մեր թշուառութիւնների պատճառուը. բայց ըն-
դունի՛ր, որ քեզ այդ փշացած կեանքի հետ կապողը հա-
րըսառութիւնը, ոսկին է: Այս, շատ բարի, աղնիւ մարդիկ
կորան, փշացան հարստութեան համար, ոսկին նոյցա բա-
րութիւնը փոխեց չարագործութեան... .

Երբ ես խօսում էի, Ստամբուլ սենեակում շտագ
ման էր գալիս: Նա յանկարծ կանգնեց առաջս և ասաց
հանգարտ.

— Ենորհակալ եմ քեզանից, նայդօ, որ ինձ ցոյց
առուիր Ճշմարիտ ճանապարհը. Ես այս օրուանից կրփոխեմ
սիսալ ճանապարհս և ուրիշ տեսակ մարդ կըդառնում
շուտով ինքդ էլ այդ կրտեսնես:

— Ստամբու, նա Ճշմարտութիւն կրգտնի, ով ապ-
րում է Ճշմարիտ կեանքը, ով միանգամից կըբաժանուի
այդ անպիտան կեանքից և գործ չի ունենալ նորա հետ:

ինչ ուզում է լինի, թող այս աղքի փոսը, գնանք Զեր-
նագօրեա, որտեղ ազատութիւն կայ, որտեղ մարդիկ ապ-
րում են իբրև մարդ. . .

— Լուռ կայ, նայդօ, ես այդ լսել չեմ ուզում, այդ
խօսքերից գլուխս պտտվում է, հասկանում ես, լոի՛ր, —
գոռաց Ստամէնը:

— Ոչինչ բղաւի՛ր, ինչպէս ուզում ես և որքան ու-
զում ես. կտրի՛ր աջ ձեռքս, ես ողորմութիւն ուզելով
էլ կ'ապրեմ, բայց գարձեալ ծշմարիտը կրխոսեմ և եթէ
քեզ կարողացայ հասկացնել, այն ժամանակ ես բաղդաւոր
կրլինիմ, որովհետեւ կորչելուց քեզ աղատած կրլինիմ:

— Ես չեմ մոռացել իմ հայրենիքը, իմ անբաղդ
Բոլգարիան, — ասաց Ստամէնը արտասուբը աչքին: — Հաս-
կանում ես դու և մինչև արիւնիս վերջին կաթիլը կրծա-
ռայեմ հայրենիքիս: Ով ցանկանում է բարի գործ անել
նորա համար գործ կրպտնուի և այդպիսի գործեր էլ շատ
կան, միայն մարդիկ են հարկաւոր, որ ինչ ճանապարհով
էլ լինի, գործ կատարեն: Ես կրսկսեմ խորամանկութիւն-
ներ անել կրստորանամ տաճիկների առաջ, կրխաբեմ նո-
ցա, կրմոռանամ ինձ, հոգ չեմ քաշել իմ մասին, այլ
միայն կրմտածեմ եղբայրներիս համար, ազգիս համար
գործ կ'ածեմ բոլոր ոյժերս՝ խելքս, միտքս, հարստու-
թիւնս: Այսպէս եթէ կարողացայ օգնել՝ լաւ է, եթէ ոչ
թո՞ղ ների ինձ Բոլգարիան... Կ'աշխատեմ այնպիսի գոր-
ծեր անել որ Սուլթանի աչքին լաւ երեեմ, նորա առա-
ջին մարդիկներից մեկը դառնամ և այն ժամանակ կարող
կրլինեմ օգնել ազգիս և նորա պակասները լրացնել: Իսկ
դու, սիրելի նայդօ, այդ բոսկներին կրլինես իմ ընկերը,
օգնականը, խորհուրդ տուողը և Աստուած կրվարձատրի
քեզ համբերութեանդ համար:

— Ամէն, — ասացի ես, — աշա՛ իմ ձեռքը, ընդունի՛ր
նորան ինչպէս մի աղնիւ կնոջ ձեռք... ուզում էի ինդրել,

որ թողնես ինձ Տրոնով գնալ հօրս տեսութեան, յետոյ՝
կուսանոց պիտի մտնէի, բայց որ դու գտնում ես, թէ
կարող եմ օգուտ տալ քեզ, օգնել հայրենիքիս, պարագ
եմ համարում մնալ այստեղ՝ քեզ մօտ:

Եւ այսպէս ես ազատ էի. բայց մնացի հարեմում...
անտանելի է թւեր ունենալ և ամենեին ըթոչել. . .

Զ.

Ստամէնը փաշա դարձաւ. նա հասաւ իւր ցանկու-
թեանը: Եւ ղարմանալի էլ չէր, որովհետեւ Տաճկաստա-
նում մարդիկ շատ շուտ են բարձրանում: Նորան նշանա-
կեցին Ֆիլիպոպոլ քաղաքի կառավարիչը ամբողջ հարեմն
ևս պատրաստվում էր Ստամէնի հետ ճանապարհ ընկ-
նել, որովհետեւ ծերունի փաշան էլ մեզ հետ էր գալիս,
չէր կարողանում բաժանուել Ստամէնից:

Միլսս շատ վատ էր. մտայ սենեակս, փակեցի դու-
ռը, սնգուկիցս հանեցի մի փոքրիկ պատկեր, որ երկար
ժամանակ թագցրել էի չար մարդիկներից և սկսեցի նորա
առաջ աղօթել: Յափշտակուած օրիցս այդ պատկերն էր
իմ ընկերը, այն էր կախած կրծքիս, երբ ինձ մլրտում
էին և նորանով օրհնեց ինձ մայրս, երբ յաւիտեան փա-
կեց իւր աչքերը... Աղօթելուց յետոյ սիրտս փոքր ինչ
թեթեացաւ:

Մի գեղեցիկ օր մօտ երեսուն կառքեր ճանապարհ
ընկան երկու փաշաների կարգ ու սարգը բարձած. այդ
կառքերից միայն քսանը տանում էին փաշայի կանանցը: Իմ
կառքում միայն ես էի, կանանցից ոչ մեկը չուզեց
ինձ հետ նստել. նոքա ինձ ատում էին, որովհետեւ չէի
նմանվում նոցա, չէի մասնակցում նոցա անարդ արար-
մաւնքներին. սորա համար էլ ինձ անուանում էին յիմար,

խելագար և ես չեմ բարկանում: Ի՞նչպէս բարկանայի, ի՞նչպէս պահանջէի վշացած կանանցից, որ նոքա աղնիւ, բարի վարմունք ունենային, չվիրաւորէին այն աղնիւ մարդիկներին, որոնց չեն հասկանում: . . .

Ֆիլիպոպօլը լաւ քաղաք էր. շինած էր գեղեցիկ տեղում, նորա մօտովն էր հոսում Մարիցա գետը. փաշայի տունը շինած էր ուղիղ գետի վերայ: Ինձ ուրախացնում էր այն, որ այդ քաղաքում շատ բոլգարներ էին բընակվում:

Հազիւ քաղաք էինք հասել, Ֆիլիպոպօլի թրքուհիները, բոլգարուհիները և յօն կանայք սկսան մեղ տեսութեան գալ: Նոքա շնորհաւորում էին մեր գալը և ծանօթացնում մեղ քաղաքի բամբասաների, գաղտնիքների և փողցների հետ: Ես շուտով բարեկամացայ մի քանի բոլգարուհիների հետ. իսկ թրքուհիներից՝ իզմայիլ փաշայի կնոջ հետ, որ շատ բարի էր: Իզմայիլ փաշան ծնուած էր թոսնիայում և նորան մեղ նման տաճկացրել էին փոքր հասակում: Նա առաջ զօրքի մէջ էր ծառայում, բայց վերջը թողել էր ծառայութիւնը: Ստամբուլ շատ շուտ ծանօթացաւ իզմայիլի հետ և միասին սկսեցին այն գործը... որ Ստամբուլ ինձ խոստացել էր: Շատ փայլուն գործեր բոլգարները նոցա երկուսին էին պարտական. շատ բարիքներ էին վայելում այդ երկուց: . . .

Ստամբուլ Ֆիլիպոպօլում բոլորովին փօխուեց. նա ուրիշ մարդ գարձաւ՝ հէնց սկզբից նա սկսեց բժշկել ժողովրդի ցաւերը: Ստամբուլ այդ քաղաքը մօա հինգ տարի կառավարեց և այդ հինգ տարուայ ընթացքում շատ թշուառների օգնեց, շատ որբերի տուն-տեղ արաւ, շատ աղքատների նեղ օրերին օգնեց:

— Գալով Ֆիլիպոպօլ, — ասում էր Ստամբուլ, — ինձ բոլորովին մառացել եմ, սկսել եմ սաստիկ սիրել թօլգարիան և բոլգարներին և կեանքս դնում եմ նոցա համար:

Եւ ուղիղ որ, իւր կարծօրեայ իշխանութեան միջոցին Ստամբուլ ապրում էր ուրիշների համար, քան թէ իւր. նա այնքան սիրել էլ բարի գործեր անելը, որ իրեն մոռացել էր: Տեսնելով այդ բոլորը, ես սաստիկ ուրախանում էի և մեծ յօսեր ունէի նորա վերայ, բայց... . . .

Մի անգամ իզմայիլ փաշան ասաց Ստամբուլին.

— Բարեկամ, ես շատ կրցանկանայի աւելի մօտ բարեկամանալ քեզ հետ. ոչ աղջիկ ունիմ, ոչ էլ քոյր, որ պսակեմ քեզ հետ, բայց ունիմ մի որդեգրուհի, որին աղջկաս պէս սիրում եմ, այդ հրեշտակին յանձնել է ինձ նորա հայրը, որ մեռնելիս արտասուքը աչքերին խնդրեց, որ իւր աղջկան բաղդաւորեցնեմ: Ես ծեր եմ և չեմ կարող նորա հետ ամուսնանալ, մեղք է և ամօթ. իսկ դու, Խէյրողի՛ն, ջահիլ խելօք և բարի երիտասարդ ես, շատ կուզէի, որ դու պսակուես որդեգրուհուս հետ և բաղդաւորեցնես նորան:

— Ոչ, — ասել էր Ստամբուլ, — առանց այն էլ երեք կին ունիմ, նոցա էլ ուղում իմ աղատութիւն տալ ուր մնաց նորից պսակուհի:

— Խէյրողի՛ն, լաւ մտածի՛ր և խնդիրս կատարի՛ր: Եթէ ուղում ես, որ գործդ յաջող գնայ, եթէ ուղում ես քո ազգին, հայրենիքին օգուտ տալ մի արձակիր կանանցդ, մի՛ իմաց տուր, որ դու տաճիկ չես և քո մէջ տաճիկ արիւն չէ վազում:

— Եթէ այդպէս է, ինչ ուղում ես արա, ես բոլորը կ'ընդունեմ, միայն թէ հայրենիքիս օգնելու գործը չվենասուէր:

— Դէհ, ուրեմն վազը արի՛ ինձ մօտ, ես կ'ասեմ իմ Զմրութին, որ դուրս գայ այդի զքօնելու. դու նորան կրտեսնես պատուհանից: Ուրախութեամբ քեզ կրտօնէի հարեմ և հէնց այնտեղ էլ կրտեսնէիր Զմրութին, բայց դու իմանում ես խօմ անիծած տաճիկների վատ

սովորութիւնը, բոլոր քաղաքը կրթարկանայ, բոլոր տաճիկները ատամ կրկրացնեն վերաս:

Երկրորդ օրը Ստամէնը գնացել էլ հզմայիլ փաշայի մօտ, այնտեղ պատուհանից տեսել էր Զմրութին և շատ հաւանել: Վերադառնալով տուն, նա խօսել էր ծերուկ փաշայի հետ իւր նոր ամուսնութեան մասին, ծերունին էլ շատ ուրախացել էր որդու նոր բաղդաւորութեան վերայ և իրաւունք էր տուել նորան պսակուել. միայն մի բան վատ էր թուել նորան—որ Զմրութը անյայտ ծընողների որդի էր: Բայց այդ՝ վճռել էին, որ Զմրութը կը լինի Ստամէնի օրինաւոր կինը, իսկ առաջուայ երկուսը, որոնցից մէկը ես էի, նորա հարձերը:

Երբ իմացայ, որ Ստամէնը նորից պսակուել էր, լաց պահել չկարողացայ և արտասուքներս աղբիւրի պէս սկսեցին վագել. բայց շուտով սրբեցի աչերս, որովհետեւ միաս ընկաւ Ստամէնի բարեգործութիւնները և հայրենիքս՝ Բօլգարիան. . .

Ե.

Պաշտելի և սիրուն արարած էր Զմրութը. բերանով պատմել չեմ կարողանում նորա առաւելութիւնները. ես այլքան սիրուն և բարի կին ամենեին չեի տեսել կեանքումն Աւելի աննման էր երեսում նա, երբ հագնում էր իւր թանկագին ոսկեկար շորերը, բաց էր թողնում ուսերի վերայ երկայն շէկ մազերը, զարդարում էր իւր սպիտակ կուներն ու մատները ակն ու մարգարիաներով և թանկագին մատանիներով. մի խօսքով՝ նա հողեղին արարած չէր կարծես, այլ մի անմեղ հրեշտակ: Նորա բնաւորութիւնը իւր թանկագին ակներից էլ առաւել էր: Ոչ ոքի վերայ բարկանալ չուներ, նորանից ոչ ոք զառը

խօսք չէր լսում և ոչ ոքի էլ չէր նեղացնում. աղքատներն էին նորա բարեկամները, նոյց միշտ օդնում էր: Մի անգամ մօտը փող չունենալով, մի խեղջ պառաւի տուել էր մատանու ակներից մէկը: Մի ուրիշ անգամ էլ տեսնելով, որ մի կին երեխան ձեռին արտասուելով բանդից դուրս էր գալիս, Զմրութը հարցրել ու իմացել էր, որ այդ թշուառի մարդը բռնուած էր պարտքերի համար, ուստի իսկցին տուել էր բոլոր պարագը և ազատել էր ընտանիքի հօրը. . .

Այդ անգին կնոջ հետ ես ապրեցի մի տարի և նորան ինչպէս քցը սիրում էի. ինըը՝ Ստամէնն էլ շատ էր սիրում և ուրախութիւնից ոտը գետնին չէր զիպչում: Բայց ինչպէս պայծառ օրից յետոյ կարկուտ, անձրւ է գալիս, այնպէս էլ մեր ուրախ օրերը տիրութեան փոխուեցան:

Վաղուց Ստամէնը ուզում էր մարդ ուղարկել Տըրնով և իմանալ արդեօք իւր ծնողները կենդանի են թէ ոչ բայց միշտ ուշացնում էր, կարծես մի բանից վախենում էր: Վերջապէս նա մարդ ուղարկեց Տըրնով և կանչեց իւր ծնողներին տեսնելու: Ես էլ իմ կողմից գնացող մարդուն ինդրեցի, որ իմ հօր մասին էլ մի համբաւ բերէ կամ եթէ կարելի կը լինի, հօրս բերէ իւր հետ:

Ստամէնը իւր անելերի մասին ոչինչ շասաց Զմրութին և ինձ էլ ինդրեց, որ ոչինչ շասեմ, նա յանկարծ էր ուզում ուրախացնել Զմրութին. բայց ես չհամբերեցի և բոլորը պատմեցի նորան: Զմրութը լացը չկարողացաւ պահել և ասաց ինձ.

— Դու և Խէյրդինը բաղդաւոր էք ուրեմն, իսկ ես, վայ ինձ, ես չզիտեմ էլ թէ որտեղ եմ ծնուել և ովքեր էին իմ ծնողները:

— Միթէ դու որբ չես,— հարցրի ես:

— Ոչ, երբ ինձ յափշտակեցին, ծնողներս կենդան էին:

— Ո՞վքեր էին նոքա, ո՞րտեղ էին ապրում, — Հարցը ի:
— Ոչինչ չգիտեմ և ոչինչ չեմ յիշում... շատ կա-
րելի է իզմայիլ փաշան իմանայ, եթէ միայն Ահմեղը
պատմել է:

Այդ ժամանակ իզմայիլ փաշան ապրում էր Հալէ-
պում: Մենք Զմրութի հետ երկար խօսելուց յետոյ, վը-
ռեցինք մի նամակ զրել և խնդրել նորան, որ նա տեղե-
կանար և յայտնէր թէ՝ որն է Զմրութի հայրենիքը, ով-
քեր էին նորա ծնողները: Ինչ որ մտածեցինք, այն էլ
արեցինք. իսկ Ստամենին այդ մասին ոչինչ չասացինք:

Բ.

Մի ամսից ուղարկուած մարդը յետ եկաւ Տըրնո-
վեց, բերեց իւր հետ կարողանում, թէ ինչ որը:
Պատմել չեմ կարողանում, թէ ինչ ուրախութեամբ
տեսնուեցանք մեր ծնողների հետ: Երբ առաջին ուրախու-
թիւնը մի փոքր անց կացաւ, ես յիշեցի Զմրութին և
նայեցի նորան: Նա նստած էր զլուխը ձեռքին խոնարհած
և պատուհանից մեզ էր նայում: իսկ արցունքները ան-
դադար վազում էին աչքերից: Այդ բապէնիքին դժուար էր
նայել նորան: Նորան բաւականութիւն տալու, հանգստա-
ցնելու համար ես պատրաստ էի բոլոր բաւականութիւն-
ներս տալ նորան:

Ստանք բոլորս տուն և Ստամենը ծնողներին տարաւ
Զմրութին ցցյ տալու: Այդ բոպէին Զմրութը մեռելի
էր նման, նորա աչքերը խոր էին ընկած, շրթունքները
սպրանած և ամբողջ մարմնով գողում էր:

— Ահա և իմ կինը, — ասաց Ստամենը, բայց երբ
նայեց կնոջ երեսին, ապշած մնաց:

— Ի՞նչ է պատահել հոգի՞ս, — ասաց Ստամենը նո-
րան, — կարելի է հիւմնդ ես:

Զմրութը լուր էր և անընդհատ գետին էր նայում:

— Դորա ծնելու ժամանակը մօտենում է, — հան-
դարտ փսփսաց ծնողներին և զառնալով կնոջը ասաց, —
գնա, սիրելիս, գնա, հանգստացի՛ք:

— Ես առողջ եմ, — ասաց Զմրութը և արտասուքը
դուրս վագեցին աչքերից:

— Ի՞նչու դու էլ չեմ ուրախանում ծնողներիս գա-
լու համար, միթէ անբաւական ես, որ նոցա տեսնում ես.
ինձ սիրում ես, պարտաւոր ես ծնողներիս էլ սիրել:

Զմրութը շարժեց գլուխը և ասաց.

— Ես ուրախանում եմ քեզ հետ միասին, Ստամեն.
ուրախ եմ քո ուրախութիւնը տեսնելով և խնդրում եմ
ծնողներիցդ, որ ինձ էլ սիրեն, փայփայեն ինչպէս քեզ
և յուսով եմ, որ նոցա սիրոցն կ'արժանանամ: Մայրական
սէր ամենեին չեմ տեսել և եթէ տեսել եմ, այնքան փոքր
էի, որ գնահատել չկարողացայ. այժմ ուզում եմ, որ ինձ
սիրեն, ինձ այժմ փայփայել է հարկաւոր. ամեն բան
պատրաստ եմ տալ մինչև անգամ որբացած սիրտս էլ,
միայն ինձ սիրեն, փայփայեն... իմ բարեկամ, ես կըսիրեմ
ծնողներիդ ինչպէս աչքիս լրացը, ինչպէս ինձ. . .

Ստամենի հայրը փաթաթուեց իւր հարսին և ասաց.

— Այօ, իմ հրեշտակս, քեզ ամենեին չեմ մոռանալ
միշտ կըսիրեմ, միայն այն ժամանակ սէրս կըհեռանայ քե-
զանից, երբ այս աշխարհից կըհեռանամ, երբ յաւիտեան
կըբաժանուեմ իմ սիրելի Ստամենից:

Իսկ Ստամենի մայրը՝ նեակովիցան ոչինչ չկարողա-
ցաւ ասել. նա միայն համբուրում էր կամ հարսին, կամ
որդուն և աղիսղորմ լաց էր լինում:

— Փայփայի՛ր, մայրիկ, կնոջս և խոստացի՛ր սիրել
նորան, ինչպէս մի ժամանակ սիրում էիր քո աղջկան,

այնպէս կարծիր՝ թէ Բօժանը այսօր կենդանացել է քեզ համար. երանի իմանամ, որտեղ է սիրելի քոյրս, կենդանի է, թէ պառկած է սառ հողի տակ:

— Բօժան, իմ աղջիկս,— ասաց Նետկովիցան, — որտեղ ես այժմ, իմ սրտիս գանձը, ուր տարան քեզ անիծած գաղանները . . . Մի՞թէ ես քո սիրուն տեսքին կարօտ պիտի մնամ, մի՞թէ առանց քեզ տեսնելու հողը պէտք է մտնեմ... վայ ինձ, իմ Բօժանից զուրկ մնացի... Զմրութը երբ լսեց Նետկովիցայի խօսքերը, վեր թռուաւ տեղից, նորա աչքերը փայլում էին, և դողդոջիւն ձայնով ասաց.

— Մայրիկ, ի՞նչ էր աղջկադ անունը, կարծեմ, դու ասացիր Բօժան. ես այժմ յիշում եմ, որ ինձ փոքր ժամանակս Բօժան էին կանչում. այո՛, այժմ ես սկսեցի յիշել որ երբ մայրս սկսում էր խաղացնել ինձ և սիրել միշտ ասում էր. «Բօժկօ ջան, հոգի ջան»:

Նետկովիցայի երեսը սաստիկ փոխուեցաւ և խեղդուող ձայնով ասաց. «Իմ Բօժանը մարմնի վերայ մի նշան ունէր. . .»

Նետկովիցան նոր էր վերջացնում իւր խօսքը, յանկարծ Զմրութի ոտները դողացին, նա ընկաւ ուշաթափ... Ստամէնը քարացած կանգնել էր և չէր հասկանում բանը ի՞նչումն է:

Հէնց այդ ժամին ծառան մի նամակ բերեց Ստամէնին: Նա իսկոյն ճանաչեց իզմայիլ փաշայի ձեռագիրը և շուտով բացեց և սկսու դողալով կարդաւ.

«Սիրելի բարեկամ Խէյլողին,

Ես մի նամակ ստացայ Զմրութից. նա ինդրում էր ինձ, որ տեղեկանամ թէ՝ ովքեր էին նորա ծնողները, այժմ աշխատիր բանը մի տեսակ ծածկել որովհետեւ Զըմ-

րութը քո քոյրն է, քո իսկական քոյր Բօժանը: Աշմէղը, որ յափշտակել էր նորան Տըրնովում, ծախել էր իմ տաճիկ տիրոջը. իսկ քեզ և մի աղջիկ ծախել էր ծերունի փաշային, որ այժմ քո տէրն է: Ի՞նչ անենք, եղբայր, Աստուած մեր մեղքերի համար պատժեց մեզ»:

Մարդու նոր յաւելը միշտ համարեա միտն են բերում հին կոկիծները և հինն ու նորը միասին խառնուելով, սպանում են մարդուն. այդպէս էլ պատահեցաւ Բօժանի հետ: Հէնց այն օրը երեկոյեան Բօժանը ծնաւ տղայ մանուկ և երբ երեխան առաջին անգամ ձայն հանեց, Բօժանը վեր առաւ նորան և ընկաւ Մարիցա գետը իւր ամօթալի կեանքին վերջ տալու համար. նորան ազատեցին, բայց երեխան խեղդուեցաւ:

Աշա՛, այն օրից սկսած ապրում եմ ես Սուրբ Կուսի Ընծայման վանքում Բօժանի հետ: Բօժանը անտանելի կոկծից կորցրեց խելքը՝ նա խելագարուեց և ապրում է իւր խցում միայնակ. երբեմն ուշքի է գալիս, գնում է եկեղեցի և խօսում է ինձ հետ, բայց այդ տարէնը մի անգամ է պատահում: Ստամէնն էլ Բօժանին ինձ յանձնելով, բոլորովին անյայտացաւ. ուր— ոչ ոք չիմացաւ: Միայն ասում են, որ տաճկաց կառավարութիւնը բանդարկեց նորան Սերերին ծածուկ օգնելու համար և այնտեղ էլ մեռաւ. . .



ՀՀ Ազգային գրադարան



NL0320372

